ՀԱՅԵՐԻ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ 1914—1915 ԹԹ. ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ

ՀՀ ԴԱԱ ակադեմիկոս Գ. Բ. ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

Փառք ու պարծանք մեր բաշարի կամավոր իրմբերին և հավերժական հանգիստ ընկածներին ու նահատակներին, որ իրենց մահով, իրենցից հետո ապրողների հանգիստը, մարդկային կյանքն ու մարդկային պատիվը ապահովեցին:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Թուրքական զավթիչների դեմ հայ ժողովրդի մղած դարավոր հերոսական պայքարի անբաժան մասը կազմող կամավորական շարժումների ուսումնասիրությունը հայոց պատմության կարևոր հարցերից մեկն է։ Այդ մասին ստեղծվել է հարուստ գրականություն, հրատարակվել են ուսումնասիրություններ, փաստաթղթերի ժողովածուներ շարժման և նրա հերոսների մասին։ Սակայն այդ բնագավառում դեռևս կան վիճելի հարցեր ու պրոբլեմներ։ 1914—1915 թթ. հայ կամավորական շարժման կազմակերպման նախօրյակին, շարժման ընթացքում և հետո տարբեր կարծիքներ են արտահայտվել նրա գնահատման վերաբերյալ։ Սուր տարաձայնություններ են եղել նաև կամավորական շարժման մասնակիցների ու ղեկավարների միջև։

Դավիթ Անանունը, Լեոն և ուրիշներ դատապարտել են հայերի կամավորական շարժումը, նշել, որ այն առիթ է տվել թուրքերին տեղահանելու և կոտորելու հայերին։ Դ. Անանունը գրել է. «Մեկ միլիոն հայ ողջակիզվեց Հայաստանի լեռներում ու ձորերում, Միջագետքի անապատներում։ Եթե չլիներ կամավորական շարժումը՝ Թուրքիան այդքան չարություն ու դաժանություն պիտի հայտնաբերե՞ր,—ահա մի հարց՝ որ ծագել է ու լուծումն չի ստացել։ ...Կամավորական շարժումը ծանրակշիռ քաղաքական ձեռնարկ էր և անմտորեն հրապարակ հանված։ Ձենք կարծում թե երբևիցե՝ պատմությունն արդարացման վճիռ արձակե նրա հեղինակների համար»[1]։

Հովհաննես Թումանյանը, Ալեքսանդր Շիրվանզադեն, Արշակ Չոպանյանը, Վահան Տերյանը, Վահան Թոթովենցը և հայ մտավորականության այլ ներկայացուցիչներ վճռականորեն պաշտպանեցին ու օժանդակեցին կամավորական շարժմանը։ Անտես չառնելով այդ շարժման և հայ քաղաքական հոսանքների առանձին սխալները, Շիրվանզադեն 1915 թ. հոկտեմբերի 15-ին «Кавказское слово» *թերթում գրում էր. «Հայ կամավորների հանդես գալը մեր բանակում ինչ-որ քաղաքական խմբերի քմահաճույքի կամ ազգային փառասիրության արդյունք չէ, օ՜, բոլորովին ոչ։ Նա ծնունդ է առել թուրքահայերի դարավոր ատելությունից դեպի Թուրքիան, որը հինգ դար շարունակ սնվում է նրանց արյունով և հինգ դար շարունակ ապականում է մեր մոլորակի ամենագեղեցիկ անկյուններից մեկը։ Նա արդյունք է Արևելյան քրիստոնյաների վաղեմի պաշտպան Ռուսիայի նկատմամբ ունեցած խոր համակրանքի։ Նա եղել է և կա որպես խաղաղ և կուլտուրական ժողովրդի*

---

1 Դ. Ա ն ա ն ո ւ ն. Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 3, (1901—1918). Վենետիկ, 1926, էջ 559—560։

տառապանքներից ծնունդ առած տարերային շարժում։ Բաժակը չափազանց լիքն էր, որպեսզի հայերը բացահայտ և համարձակ դուրս չգային իրենց ճընշողների դեմ»[2]։

1915 թ. Նոր Նախիջևանում հրատարակված Հ. Աճառյանի «Տաճկահայոց հարցի պատմությունը» գրքում կարդում ենք. «Այս րոպեին հայ կամավորների քաջարի խմբերը կռվում են անգլիական, ֆրանսիական և մանավանդ ռուսական զորքերի շարքերում։ Հերոս Անդրանիկն անցել է այդ խմբերի գլուխը, նրա անունը ոգևորում է բոլորին...։ Բոլորն էլ ոգևորված են մի ընդհանուր և անսասան գաղափարով. Տաճկահայաստանի ինքնավարությունը ռուսական հովանավորության տակ»[3]։

Շատ հնչակյաններ ևս մտան կամավորական խմբերի մեջ, նրանցից Հայկ Բժշկյանը ղեկավարում էր հնչակյան կամավորական ջոկատը։ Մկրտիչ Փորթուգալյանը 1914 թ. նոյեմբերին «Արմենիա» թերթում նշելով այն փաստը, որ ռուսահայերը կամավորական ջոկատներով օգնության են սլանում Թուրքիայում տանջվող ու նահատակվող իրենց եղբայրներին, դիմում է արտասահմանյան հայերին կամավոր գրվել, օգնել ռուսահայ կամավորներին[4]։ Նման կոչով դիմում է նաև Արշակ Չոպանյանը, որն ընդգծում էր, թե Ռուսաստանի հաղթանակը Թուրքիայի դեմ ազատություն կբերի արևմտահայությանը[5]։ Բոլշևիկների կուսակցությունը ընդհանրապես հանդես եկավ կամավորական շարժման դեմ, բայց չնայած դրան շատ հայ բոլշևիկներ հայրենասիրական զգացմունքների մղումով մտան կամավորական ջոկատները։ Անաստաս Միկոյանը, Գևորգյան ճեմարանի և Ներսիսյան դպրոցի շատ աշակերտների հետ, մտան Անդրանիկի ջոկատը։ Այդ մասին Միկոյանը հետագայում գրել է. «Մենք, առավել մարտականորեն տրամադրված աշակերտներս, հայ կամավորական ջոկատների մեջ տեսնում էինք ազգային-ազատագրական շարժմանը մասնակցելու հնարավորություն»[6]։ Բագրատ Ղարիբջանյանը «Наши дни» դեմոկրատական թերթում 1916 թ. հունվարին տպագրված «Հայերը ռուսական կայսրների գնահատմամբ» հոդվածում հպարտությամբ նշում էր, որ ավելի քան 10 հազար հայ կամավորներ խիզախորեն կռվում են ռուս զորքերի հետ կողք-կողքի[7]։

«Մշակը», «Հորիզոնը» կոչ էին անում օգնել ռուսական բանակին։ Թերթերը գրում էին, որ հայ հայրենասեր երիտասարդությունը պետք է ռուսական հաղթական բանակի շարքերում մարտնչի ոխերիմ թշնամու դեմ, գնա օգնելու Արևմտյան Հայաստանում արյունաքամ եղած իր եղբայրներին, որոնք անհամբեր իրենց են սպասում, դա բոլոր հայերի սրբազան պարտքն է։

Կամավորական շարժումը լայն արձագանք գտավ հայ երիտասարդության շրջանում։ Պատահական չէ, որ նրա լավագույն ներկայացուցիչները, որոնց թվում և Եղիշե Չարենցը ընդգրկվեցին հայրենասիրական այդ շարժման մեջ։

Սակայն առանձնապես մեծ են «ամենայն հայոց բանաստեղծ», հանճարեղ գրող Հովհաննես Թումանյանի ծառայությունները կամավորական շարժմանը։ Սույն հոդվածի նպատակն է ցույց տալ Թումանյանի գործունեության այդ կողմը, որը քիչ է ուսումնասիրված պատմական գրականության մեջ։

---

2 «Кавказское слово», 15 октября 1915.

3 Հ. Աճառյան. Տաճկահայոց հարցի պատմությունը (սկզբից մինչև 1915 թ.). Նոր Նախիջևան, 1915, էջ 78։

4 «Արմենիա», 1914, նոյեմբերի 25։

5 «Մշակ», 1914, հոկտեմբերի 17։

6 А. И. Микоян. Дорогой борьбы. М., 1971, с. 41.

7 «Наши дни», 20 января 1916.

* * *

Հայրենիքի ազատության, նրա անկախության համար անձնուրաց կռիվների թեման միշտ էլ եղել է Թումանյանի ստեղծագործությունների և հասարակական գործունեության կենտրոնում։ Մեծ բանաստեղծն ու քաղաքացին իր գործունեության առաջին իսկ քայլերից բուռն կերպով արձագանքել է հայ ազգային-ազատագրական այն պայքարին, որ 1880-ական թթ. սկսած հուժկու վերելք էր ապրում։

Դիպուկ է ասել Ավետիք Իսահակյանը. «Հ. Թումանյանը դարավոր հայ գրականության առաջնակարգ ստեղծագործողներից է, գերազանցապես առաջնակարգ իր ազգային ոգով ու ոճով, գույնով ու բույրով։ Թումանյանը մեծ շնչով երգեց հայ ժողովրդի հերոսամարտը թշնամիների դեմ, հայրենիքի ազատության ու բարօրության համար։ Երգեց հայ ժողովրդի իղձերը լավագույն ապագայի համար, և նրա նվիրական ավանդներն ու իդեալները...

Նրա էությունը հայկական էր, հայրենասիրական։ Միշտ էլ նա եղավ հայ տառապանքի հետ, հայրենիքի հետ, եղավ միշտ այն հայը, որ ոգևորվում էր խնկաբույր Նարեկով և ուխտի էր գնում մեր մամռոտ սուրբ ավերակներիս, միշտ վերածնության, ազատության հույսը հոգու մեջ...

Նա վերստեղծեց իր երկերի մեջ դյուցազնական Հայաստանը, նահապետական Հայաստանը, պատմական Հայաստանը և բովանդակ Հայաստանը հայացի, ազգային ոճով, բույրով, գույնով»[8]։

* * *

1912 թ. Բալկանյան պատերազմը կրկին ողջ սրությամբ դնում է Թուրքիայի լծից հայերի ազատագրման հարցը։ Հայկական հարցով առանձնակի հետաքրքրվածություն էին ցուցաբերում Ռուսաստանը և Գերմանիան։ Ռուսաստանը հայերի կողմն էր, Գերմանիան՝ Թուրքերի։ Իսկ անգլիական դեսպանը շտապում էր հայտնել, որ «դժբախտաբար անգլիական նավերը չեն կարող մոտենալ Վանին և Մուշին»։ Թումանյանը քաջատեղյակ էր այս բոլորին և լիահույս, որ ճակատագրի բերումով շատ հարվածներ կրած հայ ժողովուրդը անմահ է։ 1913 թ. հայ գրերի գյուտի 1500-ամյակի տոնակատարության օրերին գրած իր բանաստեղծության մեջ Թումանյանը կրկին խոսում է պատմության ահեղ հարվածների մատնված իր ժողովրդի վերածնդի մասին.

Եվ իր փլատակ տների տակից
Ելնում է ահա հզոր ժողովուրդ,
Իր վեհ ճակատին տանջանք ու թախիծ,
Խորունկ հայացքում մեծ կյանքի խորհուրդ[9]։

1912 թ. հոկտեմբերին Թումանյանն ընտրվում է Հայոց Ազգային բյուրոյի կազմում և Կովկասի հայոց գրական ընկերության՝ Հայ գրողների Կովկասյան ընկերության նախագահ։

Առաջին համաշխարհային պատերազմն սկսվելուց անմիջապես հետո 1914 թ. սեպտեմբերի 4-ին գրած «Ազգերի պատերազմն ու իրենց դյուցազուններ» հոդվածում Թումանյանը նշում էր, որ ռուսական դյուցազունների «զարկերի տակ մասնատվելու են և՛ Եվրոպայի Թուրքիան՝ Ավստրո-Հունգարիան, և՛ Ասիայի Թուրքիան... Եվ շատ բարիքների ու ազատությունների հետ միասին, որ հետևելու են մեծ պատերազմին, վերջնականապես պետք է վճռվի և տաճկահայկական հարցը կամ, եթե կուզեք, արդեն վճռված է։ Չէ՞

---

8 Ավետիք Իսահակյան. Երկերի ժողովածու. հ. 5, Երևան, 1977, էջ 283, 287։

9 Հովհաննես Թումանյան. Երկերի լիակատար ժողովածու. հ. 1, Երևան, 1988, էջ 264։

որ Մուրոմցի հսկայի «ախպերացուներին» թվումն է և մեր Սասունցի Դավիթը, եթե միայն Մսրամելիքի փորած հորից լույս աշխարհ է դուրս եկել»[10]։ «Կարևոր հույսն ու դարեվոր ճանապարհը» հոդվածում Թումանյանը քննադատում է այն անտեղյակ մարդկանց, որոնք կարծում են, «թե նոր բան են հայոց կամավորների խմբերն ու ռուս-հայկական լավ հարաբերությունները, փոխադարձ հավատն ու հույսերը»[11]։ Այդ կապակցությամբ, նա վկայակոչում է Հարություն Ալամդարյանի 1827 թ. մայիսի 15-ի ճառը Թիֆլիսում, հայերի կամավորական խմբեր ստեղծելու և ռուսական բանակի կողմը ռուս-պարսկական պատերազմում մասնակցելու մասին[12]։

Հոդվածում Թումանյանը նշում է, որ հայ ժողովրդի հզոր Ռուսաստանին ապավինվելը բարձր խորհուրդ ունի, «որ թանկագին է դարձնում ամեն մի գոյություն... Եթե Ռուսաստանը վեր է կացել իր անծայր տափաստաններից ու հորդում է դեպի իր ափերը, դրա խորհուրդը չի սպառվում էս կամ են մինիստրի մտածած քաղաքականությունով։ Ո՛չ, մի ավելի մեծ խորհուրդ կա դրա մեջ...»[13]։ Թումանյանը միշտ հավատարիմ մնաց այդ խորհրդին, որն իր նոր արտահայտությունը գտավ 1914—1918 թթ. Առաջին համաշխարհային պատերազմի դժվարին տարիներին։

Քննադատելով պատերազմ հրահրողներին, Թումանյանը միաժամանակ խորը հավատով ընդգծում էր ռուս ժողովրդի օգնությամբ հայ ժողովրդի ազատագրական ոգեկոչումը։ 1914 թ. հոկտեմբերի 31-ին, «Հորիզոն» թերթում լույս տեսած իր «Երրորդ զարկը» հոդվածում Թումանյանը կրկին նշում է իր քաղաքական հավատամքը՝ ռուսական կողմնորոշումը։ Անդրադառնալով 1827—28, 1877—78 և 1914 թթ. ռուս-թուրքական պատերազմներին Թումանյանը նշում է, որ դրանք հայ ժողովրդի համար սրբազան են, ազգային, տվել են երեք ժողովրդական հերոսներ՝ Վարդանին, Աղասուն և Անդրանիկին։ «Էս երրորդ պատերազմը ավանդական, խորհրդավոր երրորդ զարկն է,— գրում է Թումանյանը,—երրորդ զարկն է վճռում խնդիրը։ Երրորդ զարկով հյուսիսի հսկան, մեծ Ռուսաստանը վճռում է հայ ազգի հին, արյունոտ խնդիրը, ապահովում է նրա ապագան ու առաջնորդում դեպի ազատ ազգերի եղբայրությունը»[14]։ 1914 թ. նոյեմբերի 5-ին Բաքվում լույս տեսնող «Արև» թերթում, ապա՝ նոյեմբերի 9-ին «Հորիզոնում» տպագրվում է Թումանյանի «Վերջին տագնապը» բանաստեղծությունը, որում թուրքական յաթաղանի տակ տառապող հայության փրկությունը պոետը տեսնում էր Հյուսիսի մեծ հարևանի օգնությամբ հայերի ազատագրական պայքարի մեջ։

Պոետը գրում էր.

Ու ամպերում, բարձրը ուսից Մասիսի
Սլանում է մեծ արծիվը Հյուսիսի
Շիտակ դեպի բարձունքները հայկական
Իր հետևից հայ բախտն ու ապագան[15]։

Հայ երիտասարդության վրա մեծ էր Թումանյանի ազդեցությունը։ Բնորոշ է, որ Վահան Տերյանը 1914 թ. դեկտեմբերին «Մշակ» թերթում հրատարակած «Հոգևոր Հայաստան» հոդվածում ընդգծում էր, որ «բնականաբար ամեն մի հայ պիտի շահագրգռված լինի թուրքահայերի ազատագրումով, ինչ ձևով էլ լինի այդ ազատագրումը»[16]։ Տերյանը կոչ էր անում հավաքել ու հա-

---

10 Հովհաննես Թումանյան. Երկերի ժողովածու, հ. 7, Երևան, 1995, էջ 147։
11 Նույն տեղում, էջ 435—437։
12 Նույն տեղում, էջ 438։
13 Նույն տեղում, էջ 438։
14 Նույն տեղում, էջ 158։
15 Նույն տեղում, հ. 1, էջ 268։
16 Վահան Տերյան. Երկերի ժողովածու. հ. 2, Երևան, 1961, էջ 307։

մախմրել հայ ժողովրդի ուժերը, առժամանակ մոռանալ անձնական ու կուսակցական տարաձայնությունները, քանի որ նրա առջև դրված է ոչ թե կուլտուրական առաջընթացի, այլ ֆիզիկական գոյության խնդիրը։

Հովհաննես Թումանյանը, հետևողականորեն կանգնած լինելով ռուսական կողմնորոշման դիրքերում, կամավորական շարժման հենց սկզբից այն սերտորեն կապում էր ռուս զենքի հաղթանակի հետ՝ Թուրքիայի դեմ։ Մեծ բանաստեղծն ու հասարակական գործիչը պատերազմի սկզբից վճռականորեն հանդես էր գալիս Կովկասյան ճակատում ռուսական բանակին գործնական օժանդակություն ցույց տալու օգտին և ակտիվորեն մասնակցում էր այդ համաժողովրդական շարժման կազմակերպմանը։ Ազգային բյուրոն Թումանյանի գործուն մասնակցությամբ անմիջապես բանակցությունների մեջ է մտնում Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի և զինվորական բարձր հրամանատարության հետ՝ ստեղծելու հայ կամավորական խմբեր և այն ժամանակ Վառնայում գտնվող ժողովրդական հերոս Անդրանիկին հրավիրելու Թիֆլիս։

Օգոստոսի 12-ին Անդրանիկն արդեն Թիֆլիսում էր։ Ներկայանալով Կովկասյան ճակատի հրամանատարությանը նա խոստանում էր 4000 կամավորով մտնել ռուսական բանակի մեջ՝ Թուրքիայի դեմ կռվելու համար։

Առաջին համաշխարհային պատերազմի հենց սկզբից Անդրկովկասից, Հյուսիսային Կովկասից, Ռոստովից, Դոնի Նախիջևանից, Թուրքեստանից, Ռումինիայից, Բուլգարիայից, Եգիպտոսից, հեռավոր Ամերիկայից երիտասարդություններ մեծ եռանդով ու հայրենասիրական ոգևորությամբ ձգտում էր դեպի Թիֆլիս՝ կամավորական ջոկատների մեջ մտնելու, համալրելու տեղում կազմակերպված զորամասերը, որոնք ստեղծվել էին Ռուսաստանի բանակի կազմում։

1915 թ. փետրվարին Նիկոլ Աղբալյանը հայ կամավորական խմբերի մասին գրում էր. «Հայության վարիչ շրջանակները գիտեին, որ մեր ազգային բաղձանքները Թուրքահայաստանի նկատմամբ որքանով այդ բաղձանքները բանաձևված են հայոց մղած պահանջագիր-ծրագրով մի հզոր պաշտպան ունեին՝ Ռուսաստանը, և մի նույնքան հզոր հակառակորդ—Գերմանիան, որը գործում էր թե՛ հայտնապես և թե՛ դաղտնորեն՝ սադրելով Թուրք կառավարության։ Մեծ պատերազմը բռնկվելով՝ հույսեր ներշնչեց հայության, որ խորտակվելու է Հայոց հարցի հզոր հակառակորդ Գերմանիան և ուրեմն նպաստավոր քաղաքական կացություն պիտի ստեղծվի Հայոց հարցի լուծման համար։ Երբ Թուրքիան խառնվեց մեծ պատերազմին՝ հայության հույսերն ավելի հաստատուն դարձան, և բնական մղումով՝ նա մի կողմից ձևակերպեց ավելի արմատական պահանջներ,—ինքնուրույնություն, մյուս կողմից Հայոց հարցի լուծմանը միջամտելու մի նոր և գործուն ձև, զինվորական աջակցություն Ռուսաստանին»[17]։

Հայկական զինված ուժերի կազմավորման հարցով զբաղվում էր Հայոց Ազգային բյուրոն, որի մեջ 1915 թ. սկզբից մտնում էին հայ եկեղեցու Թիֆլիսի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոս Մովսիսյանը (պատվավոր նախագահ), Ա. Խատիսյանը, Հ. Խունունցը (փոխնախագահներ) և անդամներ Ա. Բաբախանյանը (Լեո), Հ. Թումանյանը, Հ. Սպենդիարյանը, Ս. Հարությունյանը, Խ. Աֆրիկյանը, Կ. Ստեփանյանը, Հ. Արզումյանը, Ա. Սահակյանը, Հ. Ամիրխանյանը, Հ. Մելիքյանը, Մ. Քալանթարյանը, Ս. Կյուլբենկյանը, Ա. Պողոսյանը, Գ. Խատիսյանը, Ս. Լիսիցյանը, Ա. Աբեղյանը, Ա. Պապովյանը և Հ. Քոչարյանը[18]։

---

17 Դ. Անանուն. նշվ. աշխ., հ. 3, էջ 545—546։

18 Очерки деятельности армянских добровольческих дружин. «Армянский вестник», 1917, № 10—18, 19; Համառոտ տեղեկագիր Հ. Կ. ազգային բյուրոյի գործունեության, 1915—1917, Թիֆլիս։

Թումանյանը որպես համազգային գործիչ մեծ դեր է խաղում կամավորական շարժման կազմակերպման գործում։

Պատերազմի տարիներին Թումանյանը երկու անգամ ռազմաճակատ է մեկնում՝ 1914 թ. հոկտեմբեր-նոյեմբերին և 1915 թ. հունիս-օգոստոսին։ Առաջին անգամ նա Մեսրոբ և Խորեն եպիսկոպոսների, Ա. Շիրինյանի և Հ. Խունունցի հետ Թիֆլիսից գնում է Էջմիածին, ապա Իգդիր, Կարս, Բայազետ, Ալաշկերտ, Բասեն, Վելիբաբա, Խորասան, Ջեվին։ Հանձնախմբի նպատակն էր պարզել հայ կամավորների վիճակը ռազմաճակատում։ Այդ նպատակով խումբը Իգդիրում հանդիպում է գեներալ Օգանովսկուն, որը բարձր է գնահատում հայ կամավորների և առանձնապես Անդրանիկի դերը։ Վանում Հ. Խունունցը, Հ. Թումանյանը տեսակցություն են ունենում գեներալ Նիկոլաևի հետ, որը նույնպես նպաստավոր վկայություններ է տալիս հայ կամավորական խմբերի ռազմական գործունեության մասին։

Բարձր գնահատելով Հովհաննես Թումանյանի հայրենասիրական գործունեությունը պատերազմի տարիներին, Դերենիկ Դեմիրճյանը հիշում է, որ հակառակ այն գործիչների, որոնք կապված էին միայն իրենց գրասեղաններին, և արտաքին աշխարհի անցուդարձերի սովորական դիտողներ էին, Թումանյանը 1914—1918 թթ. փոթորկալից իրականության ակտիվ մասնակիցն էր։ Նա ասում էր, որ «գրողը պետք է այնտեղ լինի, որտեղ իր ժողովուրդն է, գրողը պետք է իր ժողովրդի հետ կրի նրա նեղություններն ու վայելի նրա խնդությունները։ Այս էր Թումանյանի միտքը, որ շարունակ արտահայտում էր նա»[19]։

Հ. Թումանյանը շատ ծանր է ապրում թուրքական ջարդարարների կազմակերպած 1915—16 թթ. հայկական ցեղասպանությունը։ 1915 թ. ապրիլյան սարսափելի եղեռնի ազդեցությամբ գրած մի շարք բանաստեղծություններում («Աղթամարի կղզում», «Հոգեհանգիստ», «Բարձրից», «Դժոխքի հանդեպ», «Բարի իրիկուն վշտալի մայրեր» և այլն), նա ցույց է տալիս հայերի սարսափելի կոտորածները, դատապարտում նրա կազմակերպիչներին։

1916 թ. փետրվարին հայկական կոտորածների ծանր ազդեցության տակ Թումանյանի գրած «Դժոխքի հանդեպ» բանաստեղծության, ինքնադիր-պատառիկի հաջորդ երեսին կա հեղինակի հետևյալ ծանոթությունը. «Տղամարդկանց կոտորել են, ջահել կանանց տարել—մնում են պառավ մայրերը, որ հսկում են դաշտում թափված իրենց որդիների դիակներին։ Մի-մի ճյուղ առած հեռու են քշում գիշերը գիշատիչ գազաններին ու ցերեկը թռչուններին, որ չծվատեն չուտեն նրանց մարմինները»[20]։

Թումանյանը սակայն շարունակում էր հայ ժողովրդի փրկությունը տեսնել ազատագրական պայքարի մեջ՝ ռուս ժողովրդի օգնությամբ։ Վճռականորեն դատապարտում էր բոլոր նրանց, ովքեր հուսահատվում էին դժվարությունների ու անհաջողությունների դիմաց, դավաճանում էին պայքարին։ Թումանյանն զգուշացնում էր թուրքերին սպիտակ դրոշով դիմավորողներից և ոգեշնչում էր քաջամարտիկներին։

Հովհաննես Թումանյանի ակտիվ մասնակցությունը հայերի կամավորական շարժմանը, մեծ բանաստեղծի հասարակական, հայրենասիրական լայն գործունեության, հայ ռուսական հարաբերությունների զարգացման ուղղությամբ, նրա հետևողական, բեղմնավոր գործունեության անբաժան մասն է՝ Ռուսական կողմնորոշման վառ ապացույցներից մեկը։

---

19 Դերենիկ Դեմիրճյան. Երկերի ժողովածու. հ. 14, Երևան, 1987, էջ 261։

20 Հովհաննես Թումանյան. Երկերի լիակատար ժողովածու. հ. 1, էջ 632։